



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

15» 11 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0171-22

Ձեռնարկողը՝

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ  
Զվարթնոց Միջազգային օդանավակայաններ ԱՄՕ շենք

Գործունեությունը՝

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Իսահակ  
Գասպարյան փողոց 34 հասցեում բացօդյա  
ավտոկայանատեղիի կազմակերպման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

< 15 > 11 2022թ.

**Բացօդյա ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայր  
Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում՝ Զվարթնոց օդանավակայանի տարածքում բացօդյա ավտոկայանատեղիի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է 2022թ. փետրվարի 12-ին Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված N01/18-07/2-8713-52 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 350.16հա /342.802138հա, 1.655832հա, 5.7հա/ մակերեսով հողամասում, կադաստրային ծածկագրերը՝ 01-007-0571-0001, 01-007-0571-0007, 01-007-0571-0009: Հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ տրանսպորտի, էներգետիկայի:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախագծվող բացօդյա ավտոկայանատեղին նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում՝ կառուցապատումից ազատ տարածքում՝ «Զվարթնոց» օդանավակայանի հարևանությամբ: Հողատարածքը գտնվում է H=860.64-ից H=856.89 բարձրանիշերի սահմաններում: Տարածքի երկարությունն ըստ իրականացված գեոդեզիական հանույթի, կազմում է 315.00մ, լայնությունը 12.20մ-ից 105.00մ:

Համաձայն գեոլոգիական հանույթի տարածքի վերին շերտը լիցքային գրունտ է տարատեսակ շինարարական աղբով: Կառուցապատվող տարածքն իրենից ներկայացնում է հարթ ռելիեֆով հողամաս:





Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Ընդհանուր հողակտորի մակերեսն է - 350.16հա,

Բացօդյա ավտոկայանատեղիի մակերես - 2982քմ,

Կանաչապատման մակերես - 1599.68մ<sup>2</sup> /խոտածածկ/,

Կայանվող ավտոմեքենաների քանակ - 107:

Մուտքի և ելքի ճանապարհներն՝ ընդհանուր 188մ երկարությամբ, 4,5մ լայնությամբ, պատվածքի ընդհանուր հաստությունը՝ 40սմ, ընդհանուր ծավալը՝ 338.74մ<sup>3</sup>:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող ավտոկայանատեղի: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր» շինարարական նորմերի հաստատման մասին» քաղաքաշինական նորմերի համաձայն:

Նախատեսվում է հեռացնել գոյություն ունեցող տարածքի վերին շերտը 30սմ հաստությամբ, որի ծավալը կազմում է 1302.46խմ: Նախատեսվում է քանդված հողային զանգվածը հեռացնել ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ցուցումի:

Համաձայն հայտի շերտի տեղադրումը նախատեսվում է համատարած, խտացման աշխատանքներն իրականացվելու են ջրելով և 10-15տ քաշ ունեցող գլդոններով: Ավտոկայանատեղիի տարածքից վերցվելու է խտացման լաբորատոր թեստ 1000քմ-ին 1 հատ: Ըստ ներկայացված նախագծի անհրաժեշտություն է առաջանում ամբողջ տարածքից վերցնել 5 հատ խտացման փորձանմուշ, որի 3 հատ ավտոկայանատեղիից, 1 հատ մուտքի ճանապարհից ու 1 հատ ելքի ճանապարհից:

Խճավազային խարնուրդը նախատեսված է իրականացնել 20սմ հաստությամբ:

Կոպճային նախապատրաստական շերտի խտացումն իրականացվելու է հարթ գլդոններով, մեխանիկական տոփանիչներով կամ այլ համապատասխան սարքավորումներով:

Աշխատանքներն իրականացնելուց հետո նախատեսվում է իրականացնել տարածքի հարթեցում և հիմնատակի պատրաստում նախագծով նախատեսված ճանապարհային պատվածքը տեղադրելու համար, այդ աշխատանքների համար նախագծով նախատեսվում է իրականացնել 275,19խմ հանույթ և 298,15խմ լիցքային աշխատանք:

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ պատվածքը՝

- հավասարեցնող կոպճավազային շերտ 10սմ հաստությամբ ԴՕՇ 8267-93,

- խճավազային շերտ C-5 20սմ հաստությամբ ԴՕՇ 25607-2009,

- խոշորահատիկ ա/բետոնե շերտ 6սմ հաստությամբ ԳՕՍՍ 9128-2013/մոդիֆիկացված/ «Բ» տիպի 1-ին մակնիշի,

- մանրահատիկ ա/բետոնե շերտ 4սմ հաստությամբ ԳՕՍՍ 9128-2013 /մոդիֆիկացված/ «Բ» տիպի 1-ին մակնիշի,

Մինչև ճանապարհային պատվածքի տեղադրումը նախատեսված է իրականացնել արդեն հարթեցված հիմնատակի խտացման աշխատանքներ 10-15տ քաշ ունեցող վիբրոգլդոններով: Խտացման աշխատանքները պետք է իրականացնել պարտադիր ջրելու եղանակով, ապահովելով գոյություն ունեցող գրունտի օպտիմալ խոնավության պահանջը: Խտացման ընթացքում սպունգային երևույթները պետք է բացառվեն: Այն դեպքերում երբ աշխատանքների ընթացքում կբացահայտվի սպունգային երևույթներ, ապա այդ հատվածները պետք է քանդվեն՝ ոչ պակաս 30սմ հաստությամբ և փոխարենը պետք է տեղադրել լիցքային գրունտ կամ խճային հիմք: Նշված շերտերը պետք է խտացվեն: Փոխարինվող հատվածի չափը պետք է լինի ոչ պակաս 1.50x1.50մ չափերը: Խտացման ընթացքը ապահովելու համար փոխարինվող հատվածում կամ հատվածներում նոր գրունտի հաստությունը պետք է լինի ոչ





պակաս 40սմ-ը: Խտացումն ապահովելուց հետո վերևի ավել մնացած շերտը պետք է կտրվի ավտոգրեյդերով՝ ապահովելով նվազագույնս 30սմ փոխարինվող շերտի հաստությունը: Շերտի կոնստրուկտիվ շեղումը չպետք է գերազանցի +1սմ և - 4սմ-ը:

Հակահրդեհային ջրամատակարարումը նախատեսվում է ավտոկայանատեղիի արտաքին հրդեհաշիջման համար: Սնող խողովակի միացումն իրականացվելու է տարածքից մոտ 70մ հեռավորությամբ անցնող  $D=160$ մմ խողովակից՝  $D=110$ մմ պոլիէթիլենային խողովակով: Միացման տեղում կառուցվելու է փականային դիտահոր: Եվս 2 դիտահոր նախատեսվում է հակահրդեհային ստորգետնյա հիդրանտների համար:

Տարածքի անձրևաջրերը և ձնհալքի ջրերը հեռացվելու են հեղեղատար համակարգի միջոցով: Ջրերը լցվելով դիտահորերի մեջ, խողովակաշարի միջոցով հեռացվելու են դեպի ջրհավաք հոր: Ընդհանուր առմամբ տեղադրվում է թվով 9 դիտահոր: Կիրառվում են պոլիէթիլենային ծալքավոր  $\varnothing 200-250$ մմ խողովակներ:

Ճանապարհի հետ հատման վայրերում խողովակներն անցկացվելու են պողպատյա պատյանի միջով:

Արտաքին լուսավորության հենասյուները նախատեսվում է տեղադրել  $150 \times 150 \times 7$ մմ քառակուսի խողովակներով: Բարձակները նախատեսված է իրականացնել  $100 \times 50 \times 4$ մմ ուղղանկյուն խողովակից:

Լուսավորությունը նախատեսված է իրականացնել արևային ֆոտովոլտային պանելներով՝ արևային ֆոտովոլտային վահանակ բազմաբյուրեղ  $700 \times 515 \times 4$ մմ  $1,5$ մմ պատի հաստության  $17,6 \text{ 049,10}$  տարվա էֆեկտիվության անկումը ոչ ավել քան  $20\% - 30$ հատ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 52 օրացույցային օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ բեռնատար մեքենա, էքսկավատոր, գլդոն, բետոնախառնիչ, ասֆալտտեղադրիչ, ավտոգրեյդեր, բուլդոզեր և այլն:

Բացօդյա ավտոկայանատեղիի կառուցման ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, մետաղ, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Ավտոկայանատեղիի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Կատարվելու է մոտ  $2140,7 \text{ մ}^3$  ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Լիցքի համար նախատեսվում է  $23,3 \text{ մ}^3$ , ետլիցքի համար  $12,4 \text{ մ}^3$ : Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավեցման համար, ինչպես նաև շին. անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի ( $16$  մարդ), ինչը կազմում է  $17,992 \text{ մ}^3 / \text{շին. ժամ}$ , ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի  $39 \text{ մ}^3 / \text{շին. ժամ}$  կամ  $0,75 \text{ մ}^3 / \text{օր}$ : Ընդամենը ջրօգտագործումը





կկազմի 56.992մ<sup>3</sup>/շին.ժամ: Տարածքի անձրևաջրերը և ձնհալքի ջրերը հեռացվելու են հեղեղատար համակարգի միջոցով: Ջրերը լցվելով դիտահորերի մեջ, խողովակաշարի միջոցով հեռացվելու են դեպի ջրհավաք հոր: Ընդհանուր առմամբ տեղադրվելու են 9 դիտահոր: Կիրառվելու են պոլիէթիլենային ծալքավոր Ø200-250մմ խողովակներ:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու, կենցաղային, ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրագծից:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ կենցաղային (0.05տ/տարի) և շինարարական (107.7խմ) աղբն է: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Ներկա վիճակում տարածքում բուսականությունը բացակայում է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում 1599.68մ<sup>2</sup> խոտածածկի տեսքով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակը փակվելու է համապատասխան ցանկապատով,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար՝ ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվելու է հատկացնել 350.000 դրամ:





**Պատճառաբանական եզրահանգումներ.** համաձայն նախնական հայտի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսահակ Գասպարյան փողոց հ. 34 հասցեում՝ Զվարթնոց օդանավակայանի տարածքում բացօդյա ավտոկայանատեղին կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը: Հայտը լրամշակվել է դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

### **Փորձաքննական պահանջներ**

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

### **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ**

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացված բացօդյա ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության

փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ



Արմինե Վարդանյան